ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 դեկտեմբերի 2022 թվականի N 535 -Ա

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ԿԱՊՈՂ ՃԱՆԱՊԱՐՀԻ ՓԱԿ ԼԻՆԵԼՈՒ ՊԱՏՃԱՌՈՎ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՐՑԱԽՑԻՆԵՐԻ ԿԵՑՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՆՆԴԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 15-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և հիմք ընդունելով Սյունիքի մարզի Գորիս համայնքի հյուրանոցների ներկայացուցիչների՝ Սյունիքի մարզպետին ուղղված դիմումները և Սյունիքի մարզպետի աշխատակազմի ծրագրերի զարգացման և վերլուծության բաժնի պետի 28.12.2022թ. զեկուցագիրը՝

ո ր ո շ ու մ ե մ.

1. Արցախի Հանրապետությանը Հայաստանի Հանրապետությանը կապող ճանապարհի փակ լինելու պատճառով Սյունիքի մարզի Գորիս համայնքում գտնվող արցախցիների կեցության և սննդի ապահովման համար Գորիս համայնքի՝ Սյունիքի մարզպետին դիմած հյուրանոցների ներկայացուցիչներին «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում վերաբաշխում, փոփոխություններ և լրացումներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի N 2121-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 22-ի N 2049-Ն որոշման N3 հավելվածի 01 բաժնի 08 խմբի 01 դասի 05՝ «Մարզերում առաջնահերթ լուծում պահանջող ծրագրերի իրականացում, որի արդյունքում լուծում կտրվի բնակչության և համայնքների սոցիալական նշանակություն ունեցող հիմնախնդիրներին» ծրագրով Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի համար նախատեսված ծախսերի «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով սահմանված ֆոնդից հատկացնել 9 387 600 (ինը միլիոն երեք հարյուր ութսունյոթ հազար վեց հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնարարել Սյունիքի մարզպետի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությանը՝ սահմանված կարգով ապահովել վերոնշյալ՝ 9 387 600 (ինը միլիոն երեք հարյուր ութսունյոթ հազար վեց հարյուր) ՀՀ դրամ գումարի վճարումը հավելվածում նշված հյուրանոցների ներկայացուցիչներին:

28.12.2022

X

ՂՈՒԿԱՍՅԱՆ ՌՈԲԵՐՏ

Подписано: GHUKASYAN ROBERT 3712800290

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ռ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

2022թ. դեկտեմբերի 28
ք. Կապան